ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

16 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.
ԹԻՎ 5006

ՍՄԱՐԹԼԱՅՆ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ՝ Տ. ՂԱՐԻԲՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Ղարիբյանին.

Աշտարակի համայնքապետարանի և «Սմարթլայն» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի հուլիսի 20-ին կնքվել է ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/11-2 ծածկագրով ապրանքների մատակակարման գնման պայմանագիր (այսուհետ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ մատկակարարը ստանձնում է Աշտարակ համայնքի կարիքների համար փաստաթղթերի ոչնչացման սարքերի ձեռքբերման մատակարարման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1, N2 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները:

«Սմարթլայն» ՍՊԸ -ի կողմից չեն պահպանվել պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները:

Պայմանգրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանգիրը,եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանգիրը.

ա) խախտվել է մատակարարման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սմարթլայն» ՍՊԸ-ը խախտել է պայմանգրով սահմանված պարտավորությունը՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է. պայմանագիրը համարելով այն լուծված ընդհանուր 391200(երեք հարյուր ինսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով ՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը մասնակիցը հրավերով և կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով «Սմարթլայն»ՍՊԸ -ին տրվում է 10 տասը օրացուցային օր տուժանքով սահմանված որոկավորման ապահովման 75000 /յոթանասունհինգ հազար/ՀՀ դրամը և պայմանգրի ապահովման 50000 /հիսուն հազար/ՀՀ դրամ գումարները Աշտարակի համայնքապետարանի 900446101017 հաշվին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն «Սմարթլայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարի բանկ նշված գումարները գանձելու նպատակով:

Առդիր՝ էլ.նյութ

Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝
Հ. Հակոբյան
/0232/3-10-26*114